Պարոն/Տիկին Գ. Գևորգյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«03» 07 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Սեդա Շահինյան,
   - Արթուր Սաֆարյան,
   - Արմեն Հունանյան,
   - Զարուհի Ստեփանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի գլխավոր քարտուղար,
- ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Լիսաբոն, Պորտուգալիա, 2024 թվականի հունիսի 26-27-ին:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական հանձնաժողովի Եվրոպական հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրենություն (DG NEAR):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել TAIEX աջակցության գործիքի շրջանակում

կազմակերպված՝ Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) կողմից ստեղծված գեոպորտալի մշակման և պահպանման վերաբերյալ երկկողմ հանդիպմանը:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ TAIEX աջակցության գործիքի շրջանակում կազմակերպված երկկողմ հանդիպումը նախաձեռնվել է հանձնաժողովի կողմից Եվրոպական հանձնաժողովի Եվրոպական հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրենություն (DG NEAR) ներկայացրած հայտի հիման վրա: Միջոցառման նպատակն էր ուսումնասիրել Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի փորձը Գերարագ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ներդրման ծախսերը նվազեցնելու միջոցառումների մասին կանոնակարգի BCRD (2014/61/ԵՄ) ներդրման փորձը, ներառյալ միասնական տեղեկատվական կենտրոնի (SIP), վեճերի լուծման մարմնի (DSB) և լայնաշերտ ինտերնետ հասանելիության քարտեզագրման մասով: Նույն միջոցառման շրջանակում նախատեսվում է կազմակերպել նաև հանդիպում Հայաստանի Հանրապետությունում:

Միջոցառման ընթացքում ներկայացվել է Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) կողմից մշակված Համապատասխան ենթակառուցվածքի տեղեկատվական համակարգի (SIIA) ներդրման գործընթացը, որի հիմնական նպատակն է ենթակառուցվածքների (էլեկտրաէներգիա, գազ, ջուր, հեռահաղորդակցություն, երկաթուղի. և այլն) քարտեզագրումը:

Հաշվի առնելով, որ ԵՄ օրենսդրության համաձայն կարգավորող մարմնի պարտավորությունն է խրախուսել գերարագ ցանցերի ներդրման համագործակցային մոտեցումը և շուկայի տարբեր ոլորտների մասնակիցների համար հավասար մրցակցային պայմանների ստեղծումը, թվային ենթակառուցվածքների զարգացման և ներդրման ծախսերի նվազեցման ճանապարհներից մեկը գոյություն ունեցող ենթակառուցվածքների համատեղ օգտագործումն է և նոր ենթակառուցվածքների համատեղ ներդրումը:

SIIA հարթակը հենց այն լուծումն է, որը թույլ է տալիս հեռահաղորդակցության բնագավառի ընկերություններին ստանալ տեղեկատվություն իրենց համախատասխանող ենթակառուցվածքների վերաբերյալ:

SIIA-ն համարվում է կարևոր ներդրում նորարակական և հեռահաղորդակցության ծառայությունների մրցակցային էկոհամակարգի զարգացման համար: SIIA-ում գրանցված է ոլորտային շուրջ 480 պետական և մասնավոր կազմակերպություն՝ 1900 աշխատակիցներով (տեղական իշխանություններ, հանրային ծառայություններ մատուցող ընկերություններ (էներգիա, ջուր, տրանսպորտ և գազ), օպերատորներ,

ենթակառուցվածքների սեփականատերեր, հասարակական կազմակերպություններ, պետական կարգավորման ենթակա ընկերություններ, ոլորտային կարգավորող մարմիններ):

Կազմակերպությունները SIIA-ի միջոցով հնարավորություն ունեն տեղեկություններ և անհրաժեշտության դեպքում նաև կարգավորող մարմնից խորհրդատվություն ստանալ տարբեր ենթակառուցվածքների վերաբերյալ: Համակարգը ներառում է ստորև նշված տեղեկությունները

- Ենթակառուցվածքի տեսակը (աշտարակ, սյուն, դիտահորեր, խողովակներ, կայմեր, տեխնիկական շենք),
- Աշխարհագրական տեղակայման վայր,
- Ենթակառուցվածքի սեփականատեր,
- Ցանցի տեսակը (օրինակ՝ էլեկտրականություն, կապ, ջուր, գազ...)
- Երկարություն, բարձրություն, ազատ թողունակության օգտագործման ծավալ և ենթակառուցվածքը բնորոշող տվյալներ:

SIIA-ում տվյալների վերբեռնումը իրականացվում է shapefile-ի միջոցով, և ֆայլերը կարող են ներբեռնել տեղեկատվությունը Shape և Excel ձևաչափերով:

Քանի որ նոսր բնակեցված գյուղական բնակավայրերում նոր հաճախորդների ներգրավման հնարավորությունը բավականին ցածր է իսկ ենթակառուցվածքի ներդրման ծախսը բավականին բարձր, ուստի, առկա ենթակառուցվածքի համատեղ օգտագործումը նվազեցնում է նոր ենթակառուցվածքների ներդրման ծախսերը և, հետևաբար, SIIA-ն նպաստում է տվյալ բնակավայրերում ենթակառուցվածքների արդյունավետ ներդրմանը՝ հնարավորինս նվազ ծախսերի իրականացմամբ:

Համապատասխան ընկերությունները պարտավոր են SIIA-ում լրացնել և հասանլի դարձնել հետևյալ տեղեկատվությունը՝

- Տեղեկատվություն յուրաքանչյուր ենթակառուցվածքի օգտագործման հասանելիության ընթացակարգերի և պայմանների մասին,
- հայտարարություններ նոր խողովակների և/կամ այլ ենթակառուցվածքներ կառուցման վերաբերյալ,
- տեղեկատվություն ենթակառուցվածքների կառուցման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի և պայմանների մասին,

- գրանցամատյան, որը պարունակում է ամբողջական տեղեկություն էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքի տեղակայման հնարավորություն պարունակող այլ ոլորտային ենթակառուցվածքների վերաբերյալ:

Նկատի ունենալով վերոնշյալը՝

- SIIA-ում օպերատորները կարող են հեշտությամբ գտնել առկա ենթակառուցվածքի վերաբերյալ համապատասխան տեղեկությունը, որը ցուցադրվում է քարտեզի վրա՝ մանրամասն՝ ըստ աշխարհագրական դիրքի,
- SIIA-ն թույլ է տալիս տեղեկատվություն ավելացնել տարբեր աղբյուրներից և այդպիսով ավելի հեշտ է որոշումները կայացնել որոշակի ենթակառուցվածքների կառուցման և դրանց համատեղ օգտագործման մասով,
- SIIA-ում հավատարմագրված բոլոր կազմակերպությունները պարտավոր են տեղադրել իրենց համատասխան տեղեկատվությունը և պարբերաբար այն թարմացնել: Տեղեկատվության որակը ընկերությունների պատասխանատվությունն է,
- SIIA-ն որոնման և խորհրդատվության հարթակ է:

SIIA-ի ներդրման արդյունքում՝

- Կրճատվել են ցանցի տեղակայման ծախսերը,
- Նվազել են ենթակառուցվածքը վնասելու ռիսկերը,
- Ենթակառուցվածքների կառուցման համար անհրաժեշտ ներդրումների բաշխում և կրճատում,
- Ծառայությունների հասանելիության ավելի կարճ ժամկետներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին նաև Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի կողմից լայնաշերտ ինտերնետ հասանելիության քարտեզագրման առանձնահատկությունները:

Քարտեզագրումը իրականացվում է համաձայն Եվրոպական միության էլեկտրոնային հաղորդակցության օրենսգրքի 22-րդ հոդվածի՝ Պորտուգալիայի 40/2022 օրենքի հիման վրա: Վերոնշյալ օրենքի համաձայն ստեղծվել է տեղեկատվական հարթակ, որը թույլ է տալիս քաղաքացիներին, ընկերությունների և պետությանը տեղեկություն ստանալ շարժական և ամրակցված կապի ծածկույթի վերաբերյալ: Իսկ 77/2023 որոշումով սահմանվում են տրամադրվող տեղեկատվության տեխնիկական առանձնահատկությունները, ինչը շատ կարևոր է նման հարթակ ստեղծելիս:

Լայնաշերտ ինտերնետ հասանելիության հիմնական նպատակներն են՝

- Շուկայի վերլուծություն,
- Ունիվերսալ ծառայության պարտավորություն,
- Պետական աջակցության ծրագրեր
- Ծածկույթի պարտավորությունների սահմանում (կապված ռադիոհաճախականությունների օգտագործման հետ):

Տվյալները մուտքագրվում են օպերատորների կողմից: Յուրաքանչյուր շինություն ունի իր կոդը, որը պետք է համապատասխանի Պորտուգալիայի վիճակագրական գործակալության տվյալների բազայի կոդերին, ինչը իրականացվում է ANACOM կողմից:

Յուրաքանչյուր շինության մասին պետք է տրամադրվի հետևյալ տեղեկատվությունը՝

Տեխնոլոգիայի մասին տեղեկատվություն՝

- Օպտիկական մանրաթել (PON/P2P),
- Համառանցք մալուխ (DOCSIS 3.0/ DOCSIS 3.1),
- Պղինձ (ADSL-ով/առանց ADSL),
- Ամրակցված անլար հասանելիություն (լիցենզավորված սպեկտրով/առանց),
- Այլ

Ցանցի սեփականության մասին տեղեկատվություն՝

- Սեփական ցանց,
- Երրորդ անձին պատսխանող ցանց (ներառյալ ցանցի համատեղ օգտագործում),

Արագության մասին տեղեկատվություն՝

- Բեռնման/վերբեռնման առավելագույն արագություն,
- Պիկային ժամանակի բեռնման/վերբեռնման առավելագույն արագություն:

Ներկայացվեց նաև «սպիտակ տարածքների» քարտեզագրումը, որի նպատակն է խթանել բոլոր տնային տնտեսություններում գերարագ ամրակցված կապի (առնվազն 1Գբ) տեղակայման ներդրումները:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման օրակարգը, ընթացքում ներկայացված բոլոր փաստաթղթերը, ներկայացումներն ու տեղեկատվությունը հասանելի է https://drive.google.com/drive/folders/11PHeJIpJDQpjBOVP2NUn6Cnp7xPozmXM հղումով:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Վերոնշյալ հանդիպումների արդյունքներով պայմանավորված՝ հանձնաժողովի և Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչները արդեն իսկ սկսել են քննարկել հաջորդ հանդիպման անցկացման ժամկետները: Ըստ նախնական պայմանավորվածության հաջորդ հանդիպումը կկայանա Երևանում սույն թվականի նոյեմբերին կամ 2025 թվականի ապրիլին: Այս համատեքստում առաջարկում ենք շարունակել համագործակցությունը Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի հետ՝ իրենց համապատասխան փորձի ուսումնասիրության և ինչպես նաև այն Հայաստանի Հանրապետությունում ենթակառուցվածքների համատեղ օգտագործման օրենսդրության մշակման աշխատանքների շրջանակում դիտարկելու նպատակով:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև երկկող փոխըմբռնման հուշագրի ստորագրման հարցը, որը կխթանի համագործակցությունը երկու մասրմինների միջև:

Գործուղվող ---------- ***Ս.Շահինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 03.07.24թ. ***Ա.Սաֆարյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 03.07.2024թ. ***Ա.Հունանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 03.07.2024թ. ***Հ.Ստեփանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի
2018 թ.
սեպտեմբերի 19-
ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. **Մարմնի անվանումը** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. **Գործուղման մասին իրավական ակտի համարը** Հրաման 524-Հ,Հրաման 525-ԳՔ , 18.06.2024թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ՝ **Գարեգին Բաղրամյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սեդա Շահինյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի գլխավոր քարտուղար՝ **Արթուր Սաֆարյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ՝ **Արմեն Հունանյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **Լիսաբոն** / Պորտուգալիա /

5. Գործուղման ժամկետները **25.06.2024 - 28.06.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ՝240 եվրո գումարի չափով** և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ** և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գարեգին Բաղրամյան	Սեդա Շահինյան	*Արթուր Սաֆարյան*	*Արմեն Հունանյան*	*Զարուհի Ստեփանյան*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)						
	Ավիատոմսի արժեքը (դրամ)						-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)						
	Վճարը 1 օրվա համար (դրամ)						
	Օրերի քանակը						
	Ընդամենը (դրամ)	-	-	-	-	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	93	93	93	93	93	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	38,847.96	38,847.96	38,847.96	38,847.96	38,847.96	
	Օրերի քանակը	4	4	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	55,139	55,139	55,139	55,139	55,139	275.695
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար						
	Մուտքի արտոնագրի վճար						
	Այլ ծախսեր (*նկարագրել*)						
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		55.139	55.139	55.139	55.139	55.139	275.695

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 01.07.2024թ.